Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Առարկա՝ Դասվար

Թեմա՝ Կարողունակությունների ձևավորումը ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Վարժապետյան Դավիթ

Ուսուցիչ՝ Գալստյան Նելլի

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ1. 8 առանցքային կարողունակությունները.....5

Գլուխ 2 Ռուսաց լեզու առարկայի դասավանդման շրջանակներում կարողունակությունների զարգացման ուղիները 7

Գլուխ 3 Ռուսաց լեզու առարկայի շրջանակներում ձևավորվող կարողունակությունները 8

Եզրակացություն 21

Օգտագործված գրականության ցանկ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս թեման բավականին **արդիական** է և ուսումնասիրվում և հետազոտվում է ուսումնական ու կրթական որակը բարելավելու նպատակով: Հարկ է նշել, որ կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Նոր կրթական պահանջներին համապատասխան բավականին կարևոր է զարգացնել աշակերտերի կարողունակությունները յուրաքանչյուր առարկայի շրջանակներում և առավել կարևոր է զարգացնել այս կարողունակությունները **ռուսաց լեզուն** սովորելու դեպքում:



Անհրաժեշտ է ուցումնական ամբողջ պրոցեսի ընթացքում կիառել կարողունակությունների զարգացման ուղիները: Արդի դարաշրջանում ցակալի է հստակ և սահուն տիրապետել լեզվին, հասկանալ և հաղորդակցվել լեզուն կրողների հետ: Դարաշրջանի պահանջերին համահունչ քայլելու համար: ՈՒստի հիմք են ընդունվում հետևյալ հասկացությունները՝

- *հաղորդակցություն,*
- *մշակույթ,*
- *քննական և ստեղծարար մտածողություն*
- *ինքնություն*

Այս հասկացությունները անհրաժեշտ է կիառել և զարգացնել ռուսաց լզվի դասավանդման շրջանակներում: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս հասկացությունները տրոհվում են նաև ենթահասկացությունների որոնց մասին կնշվի հետազոտական աշխատանքի մեջ: Հետազոտական աշխատանքում մանրամասն կներկայացվի այս հասկացությունների և երթահասկացությունների դերի և կիրառման արդյունավետության և անհրաժեշտության մասին դասապրոցեսը արդյունավետ կազմակերպելու և նպատակներին հասնելու համար: Կնշվի նաև այս հասկացությունների կրառման և զանգացման կարևորություն ռուսաց լեզուն, որպես առարկա դասավանդելու մեջ:

Այս թեմայի ընտրությունը հնարավորություն կտա ավելի խորը ուսումնասիրել ռուսաց լեզու առարկայի շրջանակներում աշակերների կարողունակությունների զարգացման արդյունավետության աստիճանը՝ այսինքն թե ինչ աստիճանի կարելի է զարգացնել

աշակերտի մոտ պետական չափոփոշիչով սահմանված ութ կարողունակությունները ցանկալի վերջնարդյունքներին ու նպատակներին հասնելու համար: Նախ և առաջ առաջին գլխում կներկայացնենք կարողունակությունների բնութագիրը և դրանցից առաջացող հնարավորությունների մասին ռուսաց լեզվի դասավանդման շրջանակերում: Հետո կհետազոտենք կարողունակությունների զանգացմանը նպաստող և վերջնաարդյունքներին հասնելու համար ուղիների և հասկացությունների կիրառումը:

Պետք է նշել ռուսաց լեզուն աշխարհի ամենատարածված առաջատար լեզուների շարքին է պատկանում: Ոստի կարելի է ռուսաց լեզուն համարել օտար մշակույթին և պատմությանը ծանոթանալու հնարավորության միջոց, կամ գործիք աշխարհը ճանաչելու համար, քանի որ այն արդի բազմամշակութային դարաշրջանում լեզվի կիրառման և դասավանդման կարևորությունը առաջնային է կրթության մեջ: Կարողունակությունների ձևավորման դերի, առանձնահատկությունների, ուղիների և նպատակների , կիրառման անհրաժեշտությունը առարկայի դասվանդման շրջանակերում կներկայացվի հետազոտական աշխատանքի գլուխներում:
Այս հետազոտական աշխատանքի **նպատակն է՝**

- Ներկայացնել ռուսաց լեզվի կարևորությունը կարողունակությունների զարգացման գործում:

Խնդիր Դասի և թեմաների օրինակներով ներկայացնել ռուսաց լեզուն, որպես օտար լեզու դասավանդման և կարողունակությունները զարգացնող խթանող գործոն:

- Առանձնացնել նաև կարողությունները ձևավորելու համար դրված նպատակները և վերջնաարդյունքները ըստ արդի պահանջների:

ԳԼՈՒԽ 1. 8 ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայումս զարգացած կրթական համակարգեր ունեցող մի շարք երկրներում կրթության կազմակերպման ռազմավարություն է դարձել կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը:

Ընդհանուր առմամբ ընդունվում է, որ կոմպետենցիա (կարողունակություն) հասկացությունը նշանակում է գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների ամբողջություն, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիր կամ կատարելու որոշակի առաջադրանք:

Կոմպետենցիան չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Այն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ նշված որակները շարունակաբար կարող են կատարելագործվել: Այս որակները սկսում են ձևավորվել դպրոցից և շարունակում են զարգանալ ամբողջ կյանքի ընթացքում: [1]

Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրանգրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և հիմնական նպատակներից: Հարակրթական տարրական, հիմանական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնաարդյունքները նկարագրում են, թե հարնրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել, և հասկանա: **Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:** Արդի ուսումնական ծրագրերը խթանելու և զարգացնելու համար մեզ առաջարկվում է ստորև նշված կարողունակությունները;

1. Լեզվական կարողունակություն և գրագիտություն
2. Սովորել սովորելու կարողուակություն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն
6. Մշակութային կարողուկաություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8. Տնտեսկական կարողուակություն

Նոր չափորոշչով մշակված այս 8 կարողունակությունները մեծ դեր և նշանակություն ունեեն կրթության ոլորտում բոլոր առարկաների դասավանդման մեջ, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեջ: Այն հնրարավորություն է տալիս սովորողներին՝

Խորը գիտելիքներ ձեռք բերել քննարկվող հարցի վերաբերյալ, ուսումնասիրել ռուսաց լեզվով այնպիսի երևույթներ, որոնք համապատասխանում են իրենց հետաքրքրություններին, ապա կյանքին:

Ձևավորել ռուսաց լեզվին վերաբերվող գիտելիքների ինքնուրույն ձեռք բերելու, գործնականում կիրառելու հմտություններ:

Ռուսաց լեզվով ձևավորել քննադատական մտածողություն,որոնողական, հետազոտական, ստեղծագործական միտք:

Ձևավորել ռուսաց լեզվով համագործաքցային և հաղորդակցական հմտություններ, ձևավորել գործընթացները պլանավորելու և կառավարելու հմտություններ, խթանել ուսման մոտիվացիան:

ԳԼՈՒԽ 2 ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Լեզվի դասավանդման նպատակն է ձևավորել տարբեր լեզվի տիրապետող անձ, որն ունակ է հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում: Քանի որ ռուսաց լեզուն դասվում է աշխարհի ամենաշատ ուսուցանվող լեզուների առաջնային շարքում, ուստի շատ կարևոր է խորապես ուսումնասիրել և տիրապետել լեզին: Ցանկալի վերջնաարդյունքներին և նպատակներին հասնելու համար կան լեզվի դասավանդման ուղիներ, որոնց կիառումը կնպաստի ռուսաց լեզուն ուսումնասիրելու և սովորելու գործընթացին: Անհրաժեշտ է հետևել և կիառել հետևյալ ուղիները:

- Լեզվական գիտելիքների փոխանցումը և ձևավորումը,
- Յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների ու կարողունակությունների ձևավորումը,
- Ռուսաց լեզվով հաղորդակցվելու և կոգնիտիվ (ճանաչողական) կարողությունների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը,
- Քննական մտածողության, հետազոտականության և հիմնավորված դատողունակության զարգացումը,
- Ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանումը,
- Միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի խրախուսումը, Ուսումնառողների նորարարական, ստեղծարար և համագործակցային կարողությունների զարգացումը:

Նշենք նաև, օտար լեզուներ, այս դեպքում ռուսաց լեզվի բնագավառի դասընթացները նպատակաուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված բոլոր 8 կարողունակությունների ձևավորմանը: Ուսուցման համար հիմք են ընտրվել հետևյալ չորս հասկացությունները՝ *հաղորդակցություն, մշակույթ, քննական և ստեղծարար մտածողություն և ինքնություն,* որոնք այնուհետ տրոհվում են ենթահասկացությունների: Այսպիսով՝

· *«Հաղորդակցություն» հասկացությունը տրոհվում է «Ունկնդրում/ընկալում», «Ընթերցանություն», «Մենախոսություն», «Գրավոր խոսք», «Փոխներգործություն», «Լեզվանյութի կիրառում» ենթահասկացությունների: «Մշակույթ» հասկացությունը տրոհվում է «Արժեքներ», «Վերաբերմունք», «Նորմեր/Կանոններ» և «Հետաքրքրություններ/Նախասիրություններ» ենթահասկացությունների: «Քննական և ստեղծարար մտածողություն» հասկացությունը տրոհվում է «Միտք», «Տրամաբանական կապեր», «Վերլուծություն», «Առաջընթաց» ենթահասկացությունների: «Ինքնություն» հասկացությունը տրոհվում է «Անհատ», «Ընտանիք», «Համայնք» և «Հասարակություն» ենթահասկացությունների:* [2]

ԳԼՈՒԽ 3. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Լեզվական կարողունակություն կարևորագույն կարողունակությունն է, որը զարգանում է լեզուն ուսումնասիրելու բոլոր փուլերում: Ռուսաց լեզվի շրջանակներում օտարալեզու տեքստեր կարդալով և լեզվի կառուցվածքը ուումնասիրելով աշակերտների մոտ զարգանում է և գրագիտություն ռուսաց լեզվի նկատմամբ, ուսումնառության յուրաքանչուր տարում կավելանա բառապաշարը և լեզվի կառուցվածքի առանձնահատկությունների գիտերիքները և պաշարները: Խոսքը կդառնա ավելի սահուն և վստահ: Նշենք, որ լեզուն մադու մոտ ձևավորվում է վաղ հասակից և մարդկության գոյատևման կարևորագույն գործոնն է հանդիսանում: Ուստի բացի մայրենի լեզվից նաև ռուսաց լեզվի ուսուցումը ևս մեկ գործիք կդառանա անհատի ձեռքում աշխահը նորովի ընկալելու և հասկանալու համար: Աշակերտը կհարստացնի իր բառապաշարը իրեն հետաքրքող ինֆորմատիացան ռուսաց լեզվով կարդալով Ռուսաց լեզվի դասավանդման շրջանակերում այս կարողունակության զարգացման կարևորությունը ընդգծելու համար վերցնեք 6-դասարանում դասավանդող թեմաներից մեկը օրինակ՝ «Ուսումնական ճամփորդություն դեպի Հայաստան» (էջ 28) [3] Հետազոտենք թե ինչպես է այն ուուցանվում և ինչպես է ազդում լեզվական կարողունակությունների զանգացման և կիրառման վրա:

Հաղորդակցությունը →



Ունկնդրում – սովորողը լսելով հասկանում է ուսումնական ճամփորդության մասին տեքստը, քանի որ թեման ծանոթ է իրեն: Ունկնդրվող տեքստը ծանոթ բառապաշարով է

կազմված: Նա ապրում է Հայաստանում և մայրենիի դասին շատ է լսել Հայաստաի մասին: Այժմ ծանոթ տեղեկությունները նա ստանում է ռուսաց լեզվով: Զարգացնում է լեզվական կարողունակություններ:

Ընթերցանություն – սովորողը ընթերցում է դեպի Հայաստան ճամփորդության մասին տեքստը և կարողանում է գուշակել երկու-երեք անծանոթ բառերի իմաստները: Նա կարողանում է առանձնացնել տեքստի հիմնական բովանդակությունը: Ընթերցանությունը նպաստող գործոն է լեզվական կարողունակությունը զարգացնելու հարցում, ընթերցաության ընթացքում հմտանում են վարժ և սահուն կարդալու հմտությունը իհարկե ուսուցչի օգնությամբ ուղղվում են լեզվական և արտասանական սխալները, որը կտանի նրան, որ աշակերտը հետագայում կսկսի ավելի ուշադիր և անսխալ կարդալ:

Մենախոսություն – սովորողը կարողանում է մի քանի պարզ նախադասություններով և պարզ լեզվական կառույցներով պատմել դեպի Հայաստան կատարած իրենց ճամփորդության մասին: Աշակետը ընթերցելուց հետո կսովորի վերարտադրել տեքսը և կպատմի այն ռուաց լեզվով:

Փոխներգործություն – սովորողը կարողանում է երկխոսություն վարել դեպի Հայաստան կատարած ճամփորդության մասին: Երկխոսության ընթացքում սովորողները օգտագործում են ողջույնի և հրաժեշտի արտահայտություններ, շնորհակալության, հրավերի և դրանց պատասխանների արտահայտություններ:

Լեզվանյութի կիրառում – սովորողը կարողանում է կիրառել ածականները գործածել բանավոր և գրավոր խոսքում թեմային վերաբերող բառապաշարը (Էջ. 29)

Մշակույթ

Արժեքներ – սովորողը գիտակցում է, որ հայ ժողովրդի համար ամենամեծ արժեքենրից մեկը մայաքաղաքն ՝ է իր հին ու նոր պատմությունով:

Վերաբերմունք – սովորողի մոտ հարգալից վերաբերմունք է ձևավորվում հայրենիքի, Հայաստանի մայրաքաղաքի նկատմամաբ: Սեր է արթնանում Հայենիքի նկատմամբ, որոնց շնորհիվ նա կարողանում է կարդալ ու ավելի լավ ճանաչել շրջապատող աշխարհը, գրավոր արտահայտել սեփական մտքերը:

Քննական ստեղծարար մտածողություն – տեքստի բովանդակություից ելնելով աշակերտը համեմատում է ռուսական շենքերի արտաքին տեսքը Երևյանյան ճարտարապետության և հայկական ճարտարապետության առանձնահատկությունների հետ:

Ինքնություն – սովորողը գիտակցում է, որ այս հանճարեղ ու եզակի մշակույթ ունեցող երկիրը իրենն է և նա կարողանում է ներկայացնել իր երկիրը ռուսերեն լեզվով:

Ուստի ռուսաց լեզուն որպես օտար լեզու ուսուցանելու ընթացքում արհրաժեշտ է ձևավորել լեզվական կարողունակությունը լեզուն ուսումնասիրելու առաջին օրվանից ցանկալի նպակատկերին հասնելու համար: Նման կարողունակություների շրջանակներում դրվում են հետևյալ նպատակերր և վերջնաարդյունքներր:

Ինչպես նշեցինք տարրական, հիմանական, և միջնակարգ դպրոցներում վերջնաարդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է զարգացնել կարողունակությունների տարբեր աստիճաններ: Ուստի այժմ կնշեմ տարրական դպրոցում հաղորդակցություն հասկացողության շրջանակներում անրհաժեշտ հմտությունները՝ Ունկնդրում/ Ընկալում (Լսել և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով հնչող շատ պարզ, հստակ և դանդաղ խոսքը:)

Ընթերցանություն (Կարդալ և ընկալել իրեն ծանոթ առօրյա թեմաներով շատ պարզ տեքստի հաղորդած տեղեկությունները և հիմնական բովանդակությունը:) **Մենախոսություն** (Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:) **Գրավոր խոսք** (Շարադրել շատ պարզ համառոտ տեքստ իր, իր շրջապատի, առօրյայի մասին: Լրացնել պարզ տեղեկություններ պահանջող ձևաթուղթ:) **Փոխներգործություն** (Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին: Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ

կամ խնդրելով հստակեցումներ: Խոսակցին տալ պարզ հարցեր իրեն շատ ծանոթ թեմաների շուրջ:) Լեզվանյութի կիրառում(Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք:)

Հիմնական դպրոցներում նույն հաղորդակցության հմտությունը զարգացնելու համար ունենք հետևյալ նպատակներ՝ **Ունկնդրում/Ընկալում՝**

- Լսել և հասկանալ ծանոթ թեմաներով իր շուրջը ծավալվող քննարկման և հեռուստամեդիա հաղորդումների ընդհանուր բովանդկությունը և հիմնական կետերը, երբ խոսքը բավականին դանդաղ է և հստակ:

Ընթերցանություն՝

- Կարդալ և հասկանալ ծանոթ թեմաներին առնչվող ստանդարտ/գրական լեզվով տարբեր տեքստերի ընդհանուր բովանդակությունը, գլխավոր փաստերը, դեպքերի զարգացումը, հեղինակի փաստարկները և տեսակետը:

Մենախոսություն՝

- Նկարագրել իր ունեցած փորձը, զգացմունքները, ապագա ծրագրերը:
- Նկարագրել որևէ իրադարձություն:
- Համառոտ վերարտադրել գրքի, ֆիլմի, տեսանյութի և այլն հիմնական բովանդակությունը և արձագանքել դրան
- Հակիրճ ներկայացնել իր կարծիքը:

Գրավոր խոսք՝

- Կազմել կարճ տեղեկատվական, նկարագրական, վերլուծական տեքստեր իր փորձի, առօրյա կամ հանրային իրադարձությունների մասին՝ ներառելով փաստացի տեղեկություններ, փաստարկներ, կարծիքի հիմավորումներ: Նամակ թղթային և էլեկտրոնային ձևաչափերով:

Միջնակարգ դպրոցում լեզվական կարողունակությունների նպաստող վերջնաարդյունքներն են հաղորդակսություն հասկացության շրջանակներում:

Ունկնդրում/ Ընկալում	Ընթերցանություն	Մենախոսություն	Գրավոր խոսք	Փոխներգործություն	Լեզվանյութի կիրառում
Լսել և հասկանալ տարբեր թեմաներով լեզվակիրների	1. Կարդալ և հասկանալ տարբեր ժանրերի (այդ թվում՝ գրական ժանրի)	1. Հստակ և մանրամասն ներկայացնել իր կարծիքն ու դիրքորոշում	1. Ճարադրել տարբեր, այդ թվում՝ հանրային նշանակության թեմաներով	1.Հանպատրաստից և սահուն հաղորդակցվել տարբեր իրադրություն	1. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակ

(առթենտիկ), տարբեր ժանրերի, ծավալուն, ստանդարտ լեզվով/գրական խոսքի հիմնական բովանդակությունը, խոսողի տեսակետը, փաստարկները և վերաբերմունքը:	առթենտիկ տեքստերի (այդ թվում՝ հասարական արդի խնդիրների մասին) ընդհանուր բովանդակությունը, գլխավոր փաստերը, դեպքերի տրամ. զարգացումը, փաստարկները՝ ճանաչելով հեղինակի դիրքորոշումը:	ը հասարական նշանակության արդի թեմաների վերաբերյալ: 2. Բացատրել խնդիրների լուծման հնարավոր տարբերակների առավելությունններն ու թերությունները:	համակարգված, գրագետ, փաստարկային տեքստ՝ համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններն ու փաստարկները:	ներում՝ գործածելով համապատասխան լեզվական միջոցներ: 2. Հանդես գալ որպես քննարկման և/կամ բանավեճի կողմ՝ գնահատելով որևէ դեպքի, իրադարձության, երևույթի մասին այլոց տեսակետները և հիմնավորելով սեփականը:	ցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (բառապաշար, քերականություն, ուղղագրություն,արտասանություն):

Սովորել սովորելու կարողունակությունը արդի դարաշրջանում շատ կարևոր է և ամենաարդյունավետ կարողունակություններից մեկն է, որի զարգացման դեպքում մենք կունենանք ավելի զարգացած և վստահ անհատականություն ունեցող սերունդ: Տարրական դասարաններում ռուսաց լեզվով փոքր ինքնուրույն աշխատանքների, քարտային աշխատանքների կամ թիմային փոքր հանձնարարությունների կատարումը հանդիսանում է այս կարողունակությունը զանգացնող խթանող գործոն: Հարկավոր է նրանց հնարավորություն տալ՝ կիրառելով նրանց լեզվական հմտությունները անկաշկանդ հարցեր տալ, արտահայտել իրենց մտքերը իրենց իսկ արդեն յուրացրած բառերով, ազատ արտահայտել իրենց կարծիքը: Միտքը ռուսաց լեզվով շարադրելու դժվարության դեպքում անպայման ստանալ ուսուցչի աջակցությունը:

Առարկայի շրջանակներում դասերից դուրս չափոփոշչով սահմանված թեմայի շրջանակներում, կամ թեմային շատ մոտ թեմաներով հարձնարարվող ինքնուրույն շարադրությունների գրելը և համացանցից նոր տեղեկությունների դուրս բերումը նպաստում են ինքնուրույն սովորելու կարողունակությունը զարգացնելու համար:

Օրինակ `տարրական օղակում տարվա եղանակները անցնելիս պատի թերթ կազմելու համար հարձնարարել

- Ինքնուրույն գտնել, ընտրել բանաստեղծությունները, արձակ խոսքերը և նկարները:
- Թիմային աշխատանքով ձևավորել պաստառը
- Ավարտել իրենց աշխատանքը կարդալով և ներկայացնելով,
- Ճփվել ռուսաց լեզվով, խոսել և ներկայացնել իրենց բերած նյութերը:

Այժմ դասի օրինակով կներակացնենք սովորել սովորելու կարողուակության անհրաժեշտությունը և կարևորությունը երրրորդ դասարանում դասավանդվող թեմաներից մեկի շրջանակերում: Օրինակ՝

Տարրակ օղակում երրորդ դասարանում Այ Բոլիտ (тема Трудолюбивый Айболит стр.105) թեման անցնելուց առաջ հանձանարարել աշակետներին ներկայացնել յուրաքանչյուրը իր սիրած վայրի կենդանու մասին տեղեկություն՝ նկարել և պատմել դրանց մասին դասարանում այնուհետև ներկայացնել իրենց ընկերներին, հիմնավորել, թե ինչու են ընտրել տվյալ կեդանուն, կարողանան խոսել կենդանու դրական և բացասական կողմերի մասին: Ուսուցչի կողմից ստանալ աջակցություն խոսքի հստակեցման վերջավորությունների ճիշտ համադրման և միտքի անսխալ ձևավորման մեջ: Դասի թեմային անցնելու հաջորդ փուլում ուսուցիչը կարող է խոսել հիվանդությունների մասին, ինֆորմացնել աշակերտներին, որ կենդանիներ էլ են հիվանդանում: Հաղորդել նրանց տեղեկություն, կենդանիների հիվանդանալու ու բուժման մեթոդների մասին դասարանում սովորեն վիակապել, փորձեն դա խախալիք կենդանու վրա: Ծանոթանան բժշկական գործիքների հետ՝ օգտագործելով դիտակնիկ պարագաներ կամ համակարգչի օգնությամբ:

Բանավոր հարցում կիրառելով հնարավորություն տալ, որ աշակերտները իրենց կարծիքը և բուժման տարբերակները ներկայացնեն հիվանդ կենդանուն օգնության ցույց տալու անհաժեշտության դեպքում: Այս ամենը նաև ձևավորում է արժեքներ, վերաբերմունք, ստեղծարար մտածողություն, ինքնություն: Օգտագործեն շատ ածականներ բժշկի մասնագիտության կարևորության մասին խոսելիս, սովորեն ինքնուրույն նկարագել այդ մասնագիտությունը:

Ինքնուրույն և ուսուցչի կողմից տեղեկություն ստանալուց հետո կարելի է կարդալ դասը, թարգմանել, ծանոթացնել նոր բառերի բացատրությունների մասին, հարձնարարել հաջորդ դասին դերերով սովորել և պատասխանել: Կարելի է դիտել նաև մուլտֆիլմը:

Այս դասի օրիանկով մենք տեսնում ենք որ, բացի աշակետ ուսուցիչ կապից նաև կա աշակերտ -աշակերտ կապը, որը նպաստում է սովորել սովորելու կարողունակության զանգացման գործում: Նախքան դասի թեմային անցնելուց առաջ տրվող ինքնուրույն հանձնարարությունները և հավելյալ տեղեկատվությունը ռուսաց լեզվով ապահովվում են առաջընթաց և արդյունավետություն սովորել սովորելու կարողունակության զարգացման մեջ:

Մի խոսքով ուսումնառության տարբեր մակարդակներում տարատեսակ մեթոդների և հարձնարարությունների կիրառման ընթացքում հնարավոր է առաջացնել սեր և հետքրքրություն ռուսաց լեզվի նկատմամբ և արդի պահանջներին համապատասխան աշակերտին հնարավորություն տալ ազատ մտածել և ստեղծագործել, սորվորել: Սովորել սովորելու կարողունակությունը ձևավորելու համար առարկայի դասվանդման շրջանակներում շատ կարևոր է քննադատական հմտությունների ձևավորումը, որը նույնպես հնարավոր է ռուսաց լեզուն ուսումնասիրելու ընթացքում հղկել և զարգացնել կիրառելով մեթոդներ թեմայի շրջանակերում: Օրինակ՝ 9-րդ դասարանում ռուս գրականության հերոսներին նկարագրելիս առանձնացնել դրական և բացասական կերպարները

- Տալ հարնձնարարություն 18 դարի խնդիրներին նայել արդի հայացքներով
- կերպարներին և միջադեպերին նայել արդի արժեքներով և հայացքներով և քննարկել
- Թույլ տալ իրենց կարծիքը արտահայտել գրավոր և բանավոր
- Կազմակերպել բանավեճեր անցնող նյութի հերոսների մասին: [4]

Քննադատական և ստեղծարար միտք ձևավորելու համար նպաստում են հետևյալ վերջնաարդյունքները, որոնք նաև նպաստում են **մաթեմատիկական և գիտատեխնիկական** կարողունակության և **թվային և մեդիա կարողունակության** զարգացմանը: **Մաթեմատիկական և գիտատեխնիկական** կարողունակություն և թվային և մեդիա կարողունակությունը նույնպես դեր է խաղում ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում քանի, որ արդի դարաշրջանում յուրաքանչյուր օտար լեզուն կապ ունի տեխնոլոգիայի հետ և լեզվի իմացությունը ևս մի գործիք է տեխնոլոգիան ուսումնասիրելու համար: Օրինակ 7-րդ դասարանում այնպիսի թեմարերը ինչպիսին է՝ От кареты до ракеты (стр. 25) (կառքից մինչև տիեզերանավ): Նյութը ռուսաց լեզվով ուսուցանում է աշակերտի տեխնիկայի զարգացման քայլերը ժամանակի ընթացքում: Աշակերտին տալիս է հնարավություն

- տրամաբանել
- վերլուծել
- վերարտադրել և իր հասկացածը ներկայացնել ռուսաց լեզվով:

Հետյալ կարողունակությունների համար նախատեսված վերջնարդյուքները ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում:

Քննադատական և ստեղծարար միտք				
Մակարդակ	**Միտք**	**Տրամաբանական կապեր**	**Վերլուծություն**	**Առաջընթաց**
Տարրական	1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք: 2. Բերել պարզ հիմնավորումներ: 3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական	1. Ճարադրել մտքերը տրամաբանական հաջորդականությամբ և փոխկապակցվածությամբ: 2. Հասկանալ պարզ խնդիրը՝ առաջարկելով դրա լուծման պարզ քայլաշար:	1. Դասակարգել շրջապատի իրերն ու երևույթները՝ ըստ դրանց հատկանիշների: 2. Համեմատալ իրերն ու երևույթները՝ ճանաչելով հատկանիշների նմանություններն ու տարբերությունները:	1. Հասկանալ դրված խնդիրը և լուծել այն ըստ հրահանգների: 2. Բերել լուծումների համար պարզ հիմնավորումներ;

	միջոցներ:			
Դպրոցներ	**Միտք**	**Տրամաբանական կապեր**	**Վերլուծություն**	**Առաջընթաց**
Հիմնական	1. Առաջարկել նորարական գաղափարներ և լուծումներ՝ հիմնվելով նախնական գիտելիքի վրա: 2. Դրսևորել ստեղծագործ մոտեցում իր տեսակետներն ու գաղափարներն արդյունավետ հաղորդակցելու և հիմնավորելու համար:	1. Կառուցել մտքերը տրամաբանական կուռ կառուցվածքով: 2. Բացատրել տարբեր իրավիճակների շուրջ, այդ թվում նաև սեփական որոշումների հիմքերը:	1. Համեմատել և համադրել տարբեր աղբյուրներից քաղված փաստերն ու տեղեկությունները: 2. Վերլուծել խնդիրների հիմնական պատճառները և դրանց հավանական հետևանքները: 3. Մեկնաբանել սեփական որոշումները՝ հղվելով նախապայմանների ն;	1. Գնահատել իր՝ որպես սովորողի առաջընթացը՝ համեմատելով իր գիտելիքը և կարողությունները տարբեր փուլերում: 2. Կարևորել նախկին ձեռքբերումների և սեփական սխալների հիման վրա սովորելը:

՝Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունը ռուսաց լեզվի շրջանակներում նպաստում է աշակերտի մոտ ազատ հաղորդակցության հմտություններ ձևավորելով: Տարրական օղակից սկսած սովորեցնել շփման կանոները ռուսաց լեզվով, երկխոսությունների կիրառմամբ ազատ թեմաներով քննարկումների կազմակերպմամբ, խաղերի և սահիկաշարով հետաքրքիր թեմաներով տեսադասեր ներկայցնել ինքնաճանաչողական և շրջապատը ռուսաց լեզվով ընկալելու նպատակով: Ձևավորել ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունները նշանակում է ռուսաց լեզվով ծանոթանալ նաև հայկական մշակույթին, ազգային առանձնահատկություններին ընթերցելով տեքստեր ռուսաց լեզվով գրել փոքր գրույթներ, մասնակցել միջոցառումներին,

հստակեցնել խոսքը և բառապաշարը վստահ շփվել ռուսաց լեզվով: Խոսել ընտանիքի կազմի և անդամների մասին: Հանձնարարել անհատական աշխատանքներ՝ օրինակ

- նկարել ընտանիքի անդամներին, ներկայացնել նկարը ռուսերեն լեզվով:
- գրել շարադրություն կամ գրույթ իր քաղաքի կամ գյուղի մասին:
- պատրաստել պատի թերթ հասարակության վերաբերվող տարատեսակ թեմաներով և այլն:

Կիրառել տարրական հաղորդակցման գիտելիքները իսկ բարձր օղակներում ներկայացնել նյութեր և տեղեկություններ շրջապատի վերաբերյալ ռուսաց լեզվով: Ինքնաճանաչողական կարողությունները հստակ ձևավորելու համար մենք պետք է հետևենք պետական չափորոշիչով սահմանված հետևյալ նպատակներին և հասնենք վերջնարդյունքներին կիրառելով վերը նշված առաջարկվող մեթոդները: Ներկայացվում է ժամանակակից ուսումառությանը նպաստող հետևյալ նպատակները՝

Ինքնություն				
Դպրոց	**Անհատ**	**Ընտանիք**	**Համայնք**	**Հասարակություն**
Տարրական	1. Հանդես գալ որպես ինքնակազմակերպված անհատ: 2. Ճանաչել իր անհատական զարգացման գործում նոր հետաքրքրությունների և շփումների կարևորությունը:	1. Դրսևորել հարգալից և հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ՝ օգնելով նրանց տնային գործերում: 2. Խոսել քաղաքավարի ընտանիքի իր մեծ և տարեկից անդամների հետ	Ճանաչել իր՝ համայնքի անդամ լինելու փաստը և համայնքի՝ իրեն առնչվող առօրյա խնդիրները:	
Դպրոցներ	**Անհատ**	**Ընտանիք**	**Համայնք**	**Հասարակություն**
Հիմնական	1. Դրսևորել ինքնակառավարման ունակություններ ուսումնառության մեջ և միջանձնայի	1. Կարևորել ընտանիքի, ընտանիքի անդամների և սեփական դերակատարությունը ընտանեկան բարօրության համար:	1. Ճանաչել իր իրավունքներն ու պարտականությունները՝ համայնքում համակեցության կանոնների պահպանման համատեքստում:	1. Արժևորել հասարակության մշակութային և լեզվական բազմազանությունը: 2. Դրսևորել

	ն շփումներում: 2. Կայացնել ինքնուրույն որոշումներ՝ ճանաչելով սեփական հնարավորությունների սահմանները:	2. Արժևորել հոգատար և հարգալից վերաբերմունքը ընտանիքի անդամների նկատմամբ:	2. Ձեռնարկել գործուն քայլեր՝ իր համայնքի զարգացմանն աջակցելու ուղղությամբ:	քաղաքացիական գիտակցություն՝ որպես ժողովրդավարական հասարակության անդամ:
Դպրոցներ	**Անհատ**	**Ընտանիք**	**Համայնք**	**Հասարակություն**
Միջնակարգ	1. Ինքնուրույն պլանավորել և կատարել տարաբնույթ առաջադրանքներ: 2. Համագործակցել թիմակիցների հետ՝ գիտակցելով համագործակցության առավելությունը: 3. Կայացնել ապագա մասնագիտության ինքնուրույն, հիմնավորված ընտրություն: 4. Ընդլայնել	Գիտակցել ընտանիքի դերը անձի զարգացման և հասարակության առաջընթացի համար:	1. Վերլուծել համայնքի արդի հիմնախնդիրները՝ արձագանքելով դրանց որպես իրազեկ, պատասխանատու և համայնքի զարգացմամբ շահագրգիռ քաղաքացի: 2. Գործուն մասնակցություն ունենալ իր համայնքի զարգացման գործում՝ գիտակցելով իր դերն ու պատասխանատվությունը:	1. Ճանաչել հասարակության տարբեր խմբերի կամ անհատների միջև կոնֆլիկտների լուծման հնարավոր եղանակները: 2. Դրսևորել բարձր քաղաքացիական գիտակցություն՝ որպես հասարակական և քաղաքական կյանքի լիարժեք մասնակից:

	սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ:			

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը ևս հնարավոր է ձևավորել ռուսաց լեզվի դասավանդման շրջաննակնրում կիրառելով տարատեսակ մեթոդներ, օգտվելով հասկացություններից դաստիարակել աշակետի մեջ ժողովրդավարակ մտածելակերպ: Այն սկսել հենց տարրական քաղաքավարության կանոններից դասարնի աշակետների, ուսուցիչների հետ: Սովորեցնել բարեվաքության կանոնները ռուսաց լեզվով: Կիրառելով երկխոսություններ, իրավիճակային դերախաղեր հմտացնել նրանց մեջ բարեկիրթ շփման կանոնները նաև դպրոցից դուրս: Օրինակ՝խանութում, հիվանդանոցում հյուրանոցում և այլն: Փոքրիկ տեսնյութերը և բեմադրութուններ կարող են խթանող հանգամանք դառնալ այս կարողունակությունները զարգացնելու հարցում տարրական օղակում: Տարրական օղակում այս կառողունակությունը զարգացնելու համար դրված վերջնաարդյունքը պետք է լինի զարգացնել **հարգանքը դիմացինի նկատմամբ** սովորեցնելով բարեվարքությքն կանոններ և բառեր: **Վերաբերմունք** շրջապատի նկատմամբ՝ դպրոցում և դպրոցից դուրս: **Պարտակաություն** և կարգապահություն: Բարձր դասարնում սերմանել նրանց մեջ ժողովրդավարական կանոններ, հարգանք, պարտականություն, իրավունք, այդ նպատակներին հասնելու համար օգտագործել գրականություն, համացանց կազմակերպել բանավեճեր, մրցույթներ, միջոցառումներ:

Մշակութային կարողունակություն Ինչպես գիտենք մշ**ակույթը** և լեզուն սերտ փոխկապակցված են և լեզուն մշակույթի պահպանման և զարգացման հիմնական գործիքն է: Կարևոր է առարկայի դասավանդման շրջանակներում ներկայացնել և ծանոթացնել աշակերտներին մշակութային առանձնահատկություններին, լեզուն կրող ազգի ազգային սովորույթներին, արժեքներին: Տարատեսակ մեթոդների կիրառմամբ սերմանել նրանց մեջ ռուսական ազգային առանձահատկությունների նկատմամբ որոշակի վերաբերմունք, հանդուրժողականություն: Սովորեցնել ինքնուրույն տարբերել և սովորել տարանջատել հայ և ռուս ազգային ավանդույթների տարբերությունները և նմանությունները: Մշակութային կարողուակությունների զարգացման շրջաակներում կարելի հասնել հետևյալ վերջնաարդյունքներին և նպատակերին: Ձևավորել հետևյալ արժեքները, վերաբերմունքը և նորմերը:

Մշակույթ				
Դպրոց	**Արժեքներ**	**Վերաբերմունք**	**Նորմեր/Կանոններ**	**Հետաքրքրություններ/Նախասիրություններ**
Տարրական	Ճանաչել ազգային և ուսուցանվող լեզվի մշակույթների մի շարք տարրեր, դրանց դրսևորումներն առօրյա կյանքում և դրսևորել հանդուրժողակ անություն:	Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների, իր շրջապատի մարդկանց, առարկաների և շրջակա միջավայրի նկատմամբ:	1. Իմանալ տանը, դպրոցում և այլ հասարակական վայրերում վարքի տարրական կանոնները 2. Ճանաչել առողջ ապրելակերպի սկզբունքները և հետևել դրանց:	1. Ճանաչել սեփական և այլոց նախասիրություններն ու հետաքրքրությունները:
Դպրոցներ	**Արժեքներ**	**Վերաբերմունք**	**Նորմեր/Կանոններ**	**Հետաքրքրություններ/Նախասիրություններ**
Հիմնական	1. Ճանաչել ազգային և համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և արժեքները: 2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:	1. Դրսևորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք մշակութային ժառանգության հանդեպ: 2. Դրսևորել պատասխանատու քաղաքացիական վերաբերմունք՝ ճանաչելով իր իրավունքներն ու պարտականությունները որպես հասարակության անդամ:	1. Ճանաչել համակեցության կանոնները և օրենքները և հետևել դրանց: 2. Ճանաչել անվտանգության կանոնները ըստ միջավայրի և գործել դրանց համապատասխան:	1. Ցուցաբերել հետաքրքրություն ազգային և համաշխարհային մշակույթների հանդեպ:

	3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հանդուրժողականություն, հարգանք, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, ժողովրդավարություն և այլն):			
Դպրոցներ	**Արժեքներ**	**Վերաբերմունք**	**Նորմեր/Կանոններ**	**Հետաքրքրություններ/Նախասիրություններ**

Միջնակարգ	1. Արժևորել համաշխարհային մշակույթի և միջմշակութային հաղորդակցության դերը մարդու և քաղաքակրթության զարգացման գործում:	1. Դրսևորել համաշխարհային մշակութային արժեքների հետ հաղորդակցվելու ձգտում, 2. Դրսևորել գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ՝ որպես սոցիալական պատասխանատվություն և անհատի ինքնաճանաչման դրսևորում: 3. Կարևորել գիտությունը որպես աշխարհաճանաչողության ձև և գիտության զարգացումը որպես հասարակական առաջընթացի նախապայման:	1. Ճանաչել հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում, այդ թվում՝ լեզվական հաղորդակցության ոլորտում գործող տարբեր նորմերը և հետևել դրանց ըստ նշանակության:	1. Ցուցաբերել հետաքրքրություն համաշխարհային մշակույթի, գիտության, քաղաքակրթության, մասնագիտությունների հանդեպ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռուսաց լեզուն դասավանդելիս կարողունակությունների կիրառումը կարևորագույն գործոններից է արդի չափորոշիչին հիմնված, որտեղ նշվում է կարողություններ զարգացնող կրթություն: Ուզում եմ նշել այն փաստը, որ լեզուն մարդու կյանքի, կենսակերպի ամանաանբաժանելի մասն է: Այն ձևավորվում է մարդու մոտ դեռ վաղ հասակից և այն կիրառելու կարողունակությունները ձևավորվում են մարդու կյանքի զանգացման բոլոր փուլերում: Մարդը իր գիտակցական կյանքում հնարավորություն ունի նաև բացի մայերնի լեզվից տիրապետել և սովորել նոր լեզուներ այսինքն զարգացնել լեզվական կարողունակությունները և ճանաչել աշխարհը: Ռուսաց լեզուն և մշակույթը սովորելը շատ կարևոր է: Ոստի օգտագործելով բոլոր վերը նշված կարողությունները, ուղիները, հասկացությունները կարող ենք ունելալ գոհացուցիչ արդյունքներ ռուսաց լեզվով ազատ հաղորդակցվող, լեզուն ընկալող և պարզ ու բարդ միջավայրերում այն կիրառել կարողացող սերունդ ունենալ: Այս հետազոտական աշխատանքում մենք ուսումանսիրեցինք, թե աշակերտը տարրական, հիմնական, և միջնկարգ դպրոցները ավարտելուց հետո ինչ պիտի իմանա, ինչ կարողանա անել և ինչ պիտի հասկանա ռուսաց լեզու առարկայի շրջանակներում 8 առանցքային կարողունակությունները զարգացնելու համար:

Այս աշխատանքով եկանք այն եզրակացության, որ կիառելով ռուսաց լեզվի համար նախատեսված վերջնաարդյունքները մենք կկարողանանք առարկայի դասավանդման շրջանակներում ձևավորել բոլոր 8 նոր չափորոշիչով սահմանված առանցքային կարողունակությունները: Յուրաքնչյուր կարողունակություն ձևավորելու համար մենք պետք է առարկայի շրջանակում ունենանք նպատակներ և վերջնաարդյունքներ: Իհարկե այդ վերջնաարդյուքներին հասնելու համար պետք է կիրառենք մեթոդներ և ուղիներ, զարգացնենք հետազոտված հասկացությունները կարողունակությունների հիման վրա կրթություն ապահովելուվ համար:

Առանձին դասերի օրինակներով մենք ցույց տվեցինք դասի արդյուավետությունը և զարգացվող կաողունակությունները: Մենք ներկայցրեցին բոլոր ութ կարողունակությունների դերը և ազդեցություն ռուսաց լեզուն, որպես օտար լեզու դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_82.html
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
3. Ռուսաց լեզու 6: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք/ Բաբայաբ Տ., Եղիազարյան Մ., Լալայանց Ս./-Եր.: ՄԱՆՄԱՐ, 2015.-192 էջ:
4. Ռուսաց Լեզու: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք/ Բ. Եսաջանյան, Գ. Յազիչյան: Խմբագիր՝ Լ. Բալասանյան-Եր.: Անտարես, 2015,-176 էջ:
5. Ղույումչյան Գ. Ե. Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I-Եր., Զանգակ-97, 2005թ ձևի էջ:
6. Есаджанян Б.М., Ханзратян В.М. СОЛНЫШКО 3. Учебник обшеоброзовательной школы.-Ер.: "Эдит Принт", 2008.-88с.